

ըր Բ. 52, Գ. 19, կամ իրրե ախանառես և վկայում Բ. 51:

Ի վերջոյ պէտք է խոստովանել որ զ. և է. կէտերը պ. Մանանդեանցի զօրեղադոյն փաստերն են. մէկով ապացուցուած է երեք զրբի կապն ու միութիւնը միւսով ժամանակը և ապա Մխիթար Այրիվանեցու երկու յիշատակութիւնները Մ. Կ-ցու Ազուանից կաթուղիկոսների ժամանակադրական ցանկի հետ համեմատելով որոշում է մեր պատմագրի ժամանակը՝ 980—1000 թուականը:

Մի բան այստեղ միայն մոռանում է պ. Մանանդեանը թէ ինչպէս մի այդպիսի կուրօրէն արտագրող ժամանակագիր վերջացում է իւր պատմութիւնը մի ամփոփմամբ, որ մի առօրինակ բան է մեր պատմագրների մէջ և որ աւելի հասուն պատմագրի յատուկ կլինէր:

Այսպէս կամ այնպէս չենք կարող բացէ ի բաց մերժել մեր առջև դրուած իրողութիւնը, բայց միւս կողմից յառաջ է գալիս Անանիա Մոկացու թուղթը¹⁾ որի կապը Մ. Կաղանկատուացու հետ դժուար է ժխտել: Ո՞վ պէտք է լինի հապա այդ Ազուանից պատմագիրը, որի մասին Մոկացին ակնարկում է:

Մեր մտադրութիւնը չէր բնաւ նուազեցնել պ. Մանանդեանի աշխատասիրութեան արժանիքը, մենք ուզեցինք ցոյց տալ որ այս խնդիրն իսկապէս դեռ չէ վերջացած և ինչպէս ասում են զեռ շատ ջուր կլկերցնէ իսկ աղբիւրների ու ձեռագրների մի պարզ ամբողջական ուսումնասիրութիւն, որ մենք կարող ենք սպասել պ. Մանանդեանից, գուցէ կարող էր այս խնդիրը զրական կերպով որոշել:

Ս. Կ.



¹⁾ Աւարատ. 1896. յունուար 25—26. փետրուար 67—71. մարտ 125—128. ապրիլ 176—179 Խալիկ վ. ի յօդուածը և զպիւր Գալուստ Տ. Միքայէլեանի, Աւարատ. 1897 փետրուար 91—96 և մարտ 129—144:

* Սոյն գրութեմէն մասին մի նպաստար քննադատութիւն և գրել Գրութ. Կատակերու. Theol. Literaturzeitung հանդիսի մէջ, № 2, 1898:

ԳԱՒԻԹ ԲԱՂԻՉԵՑԻ

Մեր անցեալով զբաղուող հայ և օտարազգի բանասէրները՝ զրեթէ բացառապէս տենդային եռանդով աշխատում են լուսարանել մեր հնագոյն մատենագրութեան բաղմապիսի երեւոյթները: Կարող ենք ասել, որ արդէն Ե. դարու պատմագիրները զանազան ժամանակներում տարբեր աստիճանի քննադատների մի լէզիոն են հանդէս բերել: Այնքան ճոխ է օրինակ Խորենացուն ընծայուած քրննագատական մատենագրութիւնը, որ հետզհետէ նրա ուսումնասիրութիւնը առանձին մասնագիտութիւն է դառնում: Մինչ այսպէս մեր ոսկեդարեան զրականութիւնը դէպի ինքն է ձգում Հայի անցեալով հետաքրքրողներին, մեր միջնադարեան մատենագիրները մնում են զրեթէ բոլորովին անուշադիր: Մասամբ դուցէ այդ է պատճառը, որ վերջին դարերում ծաղկող պատմագիրներից շատերի անունն անգամ անյայտ է մեզ: Այսպէս օրինակի համար Սիմէօն Բախուանցու, Մինասենց Թովմա վարդապետի, Յովհան քահանայ Արծիշեցու, Դաւիթ Բաղիշեցու, Յովհաննէս կրօնաւորի, Գրիգոր վարդապետ Կամախեցու, Բարսեղ վարդապետ Վարդեցու, Շուղանցի Բարդողիմէոս վարդապետի, Վարդան վարդապետ Բաղիշեցու և այլոց, մեծ մասամբ անուններն իսկ անյայտ են¹⁾: Գրիգոր Ժերեկցի «Յիշատակարան Աղեւից» պատմական երկը նորերումս լոյս ընծայեց մեծարգոյ պ. Գ. Խալաթեանց:

Այս բոլոր տարեգիրները ի հարկէ շատ կողմերից հետաքրքրական են. բայց աւելի կրեւոր են հետեւեալ 3 պատմաբաններով. նախ՝

¹⁾ Սիմէոն Բախուանցին գրել է Պոս.—Պո (1392—1401) 9 տարուայ ժամանակակից պատմութիւն. Մ. Թովմա վարդապետը 1419—1452, 33 տարուայ պատմութիւն. Յովհաննէս կրօնաւորը 11 տարուայ 1440—1451. Յովհաննէս քահանայ Արծիշեցին 16 ամաց տարեգրութիւն 1531—1547. Գրիգոր վարդապետ Կամախեցին 1559—1594. եւայլն: Այս բոլոր պատմագիրների ծաղկման ժամանակի և քովանդակութեան մասին մեր պատմաստեմ «ձեռագրների ցուցակի» մէջ կիսուեմք քննարկութեամբ:

2. Վարդաշապատ. 1897 թ. ա. էջիմամբի. արտ. «Աւարատից»:

նրանց քաղաքացիական և քաղաքացիական մասերը մեզ միջոց են տալիս մեր տարածվող պատմիչների համեմատութեան և վերստուգութեան. Բ. նոքա ներկայացնում են մեր պատմութեան նշանաւոր շարժանները աւանդութիւններով զարգացած, որով հնարաւորութիւն ենք ստանում գրանցել յօրինման ժամանակը և երբեմն իսկ շարժաւիթը գտնելու, և վերջապէս նոքա իրենց ժամանակի լեզուի և պատմութեան համար անհնահատելի աղբիւրներ են:

Մենք ձեռնարկում ենք «Դատիթ Բաղիշեցու» հրատարակութեան, որից արդէն մի քանի աննշան հատուածներ հրատարակել է մեծարդիւն Հ. Ղ. Ա. Փիրղալեման:

Ձեռագիրը գտնուում է Բարեշնորհ Սալիկ վարդապետի հարուստ ժողովածուի մէջ, որի ցուցակը յոյս ունինք Սեանի ժողովածուին կից հրատարակել:

1. Տես. Նոստրի Հայոց. հաւաքակալ և ի յոյս ածեալ ձեռագիր Հ. վարդապետի Տոսթեցոյ. Կ. պոլիս, 1888. տպ. նշան Կ. Պետրոսեան. էջ. 86, 122—3, 148, 209: Այլի ընկնող տարբերութիւններ կնշանակուին հրատարակութեան ժամանակ: «Յուցակիս» մեջ կիսուեմ սոյն վարդապետի գրած ձեռագիրների և գրաւոր անկող աշխատութեանց մասին:

2. Անշուրդ լեւի համարում այստեղ նշանակել արժ. չոր ժողովածուների միայն վերագրելները. I. ժողովածու կոնգրակաց կարողիկոսացն Հայոց. II. ժողովածու հրովարակաց, կարուածագրոց վանուցն պարսկականաց (ս. Բաղիշեցու, Նախապալայի և այլն, ի հայ և ի պարսիկ լեզու.) III. ժողովածու կոնգրակաց վարեւաքոց. Կարողիկոսաց և մեհարպոսացն Աղուանից. IV. ժողովածու այլ և այլ կարուածագրոց, պայմանագրոց նաչին, վերաբերելոց քեմին Արցախայ. V. ժողովածու հրովարակաց և կարուածագրոց վանորիցն նահանգին Արցախայ. VI. ժողովածու յիշատակարանաց, նկարոց և օտարեզու մագաղաբեայ գրութեանց. VII. ժողովածու մագաղաբեայ պահպանակաց: Այլ և I. պատճենի կոնգրակաց հրամանագրոց և այլ կարեւոր քոքոց վերաբերելոց քեմին Արցախայ. ընդ աւելն ցուցակ 2-եւագրաց այլ և այլ տեղաց. II. պատճենի հրովարակաց, հրամանագրոց և կարուածագրոց և այլն, վերաբերելոց քեմին Արցախայ (ի պարսիկ լեզու.) III. պատճենի հրովարակաց և այլն. վերաբերելոց քեմին Արցախայ (ի ռուսարարոց): Բացի սրանից Հայր սուրբը ունի նաեւ նախապատմական ժամանակի քանկագին յիշատակներ: Այս ամբողջ պատկանելի ժողովածուն Բարեշնորհ Հայր սուրբին պահպանելով պատշաճում է ընծայելու Մայր Աթոռի մասնաշաղկապին և քանդաւանդին, «ցուցակիս» հրատարակութեանը:

Ձեռագիրն արտաքին նկարագրութիւնը հեռեւեալն է նիւթ.—հաստ թուղթ.—հանգամանք.—վառ չէ. տեղ տեղ խոնաւութիւնից եղծուած և ընդհանրապէս կեղտոտ. դատարկ.—1-ա. 33-բ.—34-ա. մեծութիւն.—21, 2×6, 3×1, 5. գրութիւն.—երկսիւն 10, 5, 5×5, 5. թուղթ.—68. տողը. 29—30. գիր 2 տեսակ բողոքգիր. վերնագիր, կարմիր թանաքով սկզբնատառը.—թռչնագիր, կիսախորանք, 2-բ. սե թանաքով. Տեղեկութիւն.—թերի, վերջից և միջից: (Ժամանակի մասին թէև խօսք չկայ, բայց դժուար թէ ԺԼ. դարից այս կողմը լինի. գրիչը ըստ Առաքել վարդապետի իրր թէ Արիստակէս ոմն է.): Բովանդակութիւն. 1-ա. ծննդաբանութիւն Ագաւայ սկսած մինչև Արայ գեղեցիկ. 2-ա. Դատիթ բանասիրի Բաղիշեցու ծաղկաբաղ արարեալ ի բազում պատմագրաց զազն յարեթի և սուղ ինչ ըզսեմայ և զքամայ ըստոյգ դտակաւ բազում աշխատութեամբ ընտրելով դաւն և զպիտանին անսխալապէս շնորհօք քրիստոսի աստուծոյ մերոյ: 24-բ. Արդ կամիմ համառօտաբար բացայայտել զԹագաւորս պարսից, որ Սասանեան կոչի մինչև ցայժ. 25-բ. այլ մեք դարձցուք յառաջին ուստի թողաք ի հայոց բան. 31-բ. յայտմ վայրի եղև թագաւորութիւն ցեղիցն Ռուբինեանցն, որ յարծրունեաց և հայկազանց խառնեալք խնամութեամբ, որոց նախ թագաւորեաց լեան (թերի. երես 33-բ.—34-ա.) 34-բ. Համառօտ պատմութիւն ազգացն Տաճկաց. 41-բ. Այսուհետև կամիմ բացայայտ առնել զկարգ սրբազան Կաթուղիկոսաց. 45-ա. Արդ կամիմ ծաղկաբաղ առնել յարրահամէ մինչև քրիստոսի ծնունդն և անտի կարգաւ մինչև ի կոստանդիանոս և ի նմանէ մինչև ի թվ. չ. (թերի. 1 թուղթ հազիւ պակաս):

Մեր ձեռագրի նոր ժամանակների մի արտագրութիւնը նոյնպէս մեր առաջն է: Արտագրողն է Առաքել վարդապետ Կոստանեան Տոգեցի. արտագրութիւնը սկսում է 34-բ.-ից

1. Այս քաղաքացիական վարդապետի 2 մեծ պատմական երկասիրութիւնների, ինչպիսի յայտնի է «Դաղմիկ Դատարապի» գրքի համար մեղած վիճարանութիւններից, առնել է Բաժմին և չի կարողացել վերագրանել իւր վտարանա

(տե՛ս վերև)։ Հ. զրիշը կցում է իւր ծանօթութիւնները իսկական պատմութեան՝ ձեռագրաց յիշատակարաններից օգտուելով, որոնցից մի մասը առաջ կրեւնէք հրատարակութեան ընթացքում։

Այս ձեռագրի մի այլ օրինակն ևս կայ Հիմ անապատում, որի համար ահա թէ ինչ է ասում հ. Ղ. վ. Փիրդալէմեանը. «Ունի սոյն Դաւիթ վարդապետ մի պատմագրութիւն, սկզբնաւորեալ յիշխանութենէ տէրութեան Ռուբինեաց մինչև ի ժամանակս իւր, որոյ բռնագիրն կայ ի Հիմ անապատն»։¹ Մեր ձեռագիրը հերքելով այդ ընդգծած սխալ տեղեկութիւնը, կարօտում է Հիմ անապատի ձեռագրին, Ռուբինեանց պատմութեան 2 էջ պակասը և վերջից Յունաց պատմութեան թերին լրացնելու համար։

Այժմ տեսնենք թէ ո՞վ է Դաւիթ «Բանասէր» Բաղիշեցին՝ մեր զրքի հեղինակը։ Բաղիշեցի կոչումը պարզ ցոյց է տալիս, որ նա ծնուել է Բաղէշում, և իւր ասելով այնտեղ է անցկացրել իւր մանկութիւնն ու երիտասարդութիւնը. «սնեալ ի մանկութենէ առ ոտս երջանիկ և երիցս երանեալ հօրս մերոյ Մեսրոպ վարդապետի՝ անյաղթ փիլիսոփայի և քաջ քարտուղարի»։ որը Փիլիպպոս Կաթողիկոսից ձեռնագրուած և կարգուած էր վանահայր Գոմոց վանքի և «հոգեւոր վերատեսուչ» Բաղէշ քաղաքի և շրջակայ երկիրների։ Սրա մօտ է կրթւում մեր բանասէր Դաւիթը և պատրաստւում հոգեւոր կոչման համար. Ռ. Ղ. թուին (1641) իւր «փիլիսոփայ» ուսուցչից ստանում է քահանայական աստիճան, 1647-ին՝ «գաւազան իշխանութեան» և

1651-ին կարգւում է Բաղիշի 4 վանքերից մէկի՝ Խնդրակատար ս. Աստուածածնի վանահայր, որն և նորոգում է.՝ 1673-ին իւր վարդապետ Մեսրոպ արքեպիսկոպոսի և աշակերտ Աւետիք վարդապետի հետ ուխտի է գնում Հիմ անապատ և այնտեղ Որդոյն Որոտման տօնի օրը վախճանւում է. հենց Մեսրոպ արքեպիսկոպոսի ասելով այնտեղ ևս թաղւում է։ Նրա դամբանքարը կրում է հետեւեալ արձանագրութիւնը. «Վանքնեցաւ ս. խաչս բարեխօս առ Աստուած Բաղիշեցի Դաւիթ վարդապետին և ամենայն աշխատողացն, յիշեցէք ի Բրիստոս. թվ. ՌՃԻԲ»։²

«Բանասէր» համեստ կոչումը իրեն վերընծայող Դաւիթ վարդապետը՝ ներքին շինարարական և գրականական աշխատանքներից զատ, ջերմ մասնակցութիւն է ունեցել նաեւ իւր ժամանակում յարուցուած եկեղեցական — վարչական խնդիրներին։ Նա այն մեծ դպրոցի հետեւողներից է, որի հիմքը դրել է Մովսէս կաթ. Տաթևացին (Սիւնեցին) և շարունակել ու ծաղկեցրել Փիլիպպոս կաթողիկոսը։ Ահա առաջին հայրապետական զահ բարձրանալը որպիսի զոհութեամբ է յիշում մեր պատմիչը. «Աւրհնեալ է Աստուած որ... յարոյց մեզ կղջիւր փրկութեան զհամանման նախամարգարէին զՄովսէս Տաթևացին»։³ Նորա ուսուցիչ Մեսրոպ եպիսկոպոսը Փիլիպպոս կաթողիկոսի ձեռնաստէնը լինելով, բնականաբար նոյն հոգեով ևս պիտի դաստիարակէր իւր սանիկին։ Այդ մենք տեսնում ենք պատմագրի խօսքերից և գործերից։ Մեր հեղինակը զայրոյթ է յայտնում այն չորս կաթողիկոսների դէմ, որոնք ճգնում էին հայրապետական զահը կաշառարեկութեամբ միմեանց ձեռքից խլելու (Աւետիս, Մելիքսեթ, և Դաւիթ և միւսն անյիշելի)՝⁴ և ցանկանում է Մ. Աթոռը և նորա առաքելական զահակային արժանաւոր բարձրութեան վրայ տեսնել։ Ահա թէ մի քանի բառերով ինչպիսի իրական պատկեր է տալիս ս. Էջմիածնի

մանուսկրի պատմագրի (որից նա օգտուել է «մամայի մեղի-խորիւններ» գրելիս)։ Խաչիկ վարդապետի ժողովածունք մեզ կան Բաժմիի գեղապետ Յ. Գ. Լազարեանի Մ. վարդապետի, իւր Առաջիկ վարդապետի մամակներ, որոնցից խմանում ենք որ այդ շատ հետաքրքրական պատմագրական ժողովածուն մնացել է Բաժմու ժողովների մեկում։ Ժամանակակիցները միմեանց մեկից են խլել այդ աշխատութիւնը, և մեզ այժմ ցանկալի է խմանալ, քե այդ մեղագիրը կուլ լի գրեւոր ժամանակի ամենացանկ հոսանքին։ Տող գիւղը գրեւորում է Լաւրապոյ Դիպակ գաւառում։ Առաջիկ վարդապետը Գոյոյ վանքի վանահայր է եղել։

1. Նոստր Հայոց. էջ. 86 ծան. 2.

1. Ձեռագիր. Դաւիթ Բաղիշեցի. 44-ա.

2. Տե՛ս. Նոս. Հայոց. 86, ծ. 2.

3. Ձեռագիր. Դ. Բաղիշեցի. 40-ր.

4. Ձեռ. 39-ր.

և միւս վանքերի այն ժամանակուայ դրու-
թեան. «Մուրբ աթոռն խարխալեալ և խրթ-
նացեալ ի բարեզարդութենէ և դոմս խաշանց
եղեալ, զի եթէ մայրն բազմորդի և աթոռն
Քրիստոսադիր այսպէս կայր . . որչափ ևս ա-
ռաւել ծնեալքն ի նմանէ, նսեմացեալ կային
ի սգի . . »: Նա ջերմ պաշտպան է ս. Էջմիած-
նի Մայր Աթոռի շահերին և ահա թէ ի՞նչ-
պէս է խօսում նորա զահակալի՝ Փիլիպպոս
կաթուղիկոսի հայրապետութեան առաջին տա-
րին երեւցող հակառակորդների դէմ. «Զի
կամին զհռոմաց տունն անջատել ի զրկաց
մօրն լուսոյ, անջատեցան և ինքեանք ի փա-
ռաց լուսոյ նորա, զի ոմանք յանկարծամահ
եղեն, ոմանց՝ լեզուքն արորեցաւ, ոմանք
ի հաւատոց ընդ մէջ կոտորեցան և մեք ազա-
տեցաք ի նոցանէ . . »¹ այս պատմական փաս-
տին կցում է իւր սպառնալից որոշումը. «և
եթէ ոք այսուհետեւ քրիստոսադիր աթոռին
հակառակի՝ զպատիժն Կորինոյ և Դատանա
կրեցէ. զի սայ է Մայր մեր ամենեցուն»:²
Աւելի մեծ ոգևորութեամբ նկարագրում է իւր
և Մեսրոպ եպիսկոպոսի Աղթամարի կաթու-
ղիկոսաց շահասիրական ձգտումների դէմ մը-
ղաժ կռիւլը որով և բացատրուում է նորա
Մայր Աթոռին ցոյց տուած նախանձախնդրու-
թիւնը:

Կղկիւրնակ կաթուղիկոսին յաջողում է
կաշառքով հրովարտակ ստանալ այս իմաստով
թէ՝ վան և Բաղէշ քաղաքները Աղթամարի
զահակալի իշխանութեան պէտք է ենթար-
կուին. այդ թղթով առում է մեր պատմա-
դիրը «գոռհ տուեալ արբանեակք չարին . .
եկին ի Բաղէշ քաղաք, իրր այսուհետեւ մի ոք
իշխեսցէ զանուն Էջմիածնայ տալ, այլ զԱղ-
թամարայ. Եւ զայն տեսեալ մեծ վարդապե-
տին Մեսրոպայ հանդերձ միօր զմահ յանձն
առեալ և մի՛ տեսանել զարհամարհանս Մօրն
լուսոյ և ո՛չ թողաք յեկեղեցի և գնացեալ
իջևանեցան ի խանութ և ի խաներս. ապա
Աւտող խանի օգնութեամբ վաճառում են նոցա
քաղաքից: Երկու տարուայ ընթացքում Մար-
տիրոս Փշրուկ կաթուղիկոսը վարդապետնե-
րով, ժողովրդականներով և տէրութեան ներ-

կայացուցչով 7 անգամ փորձ է անում հա-
տակցնելու արի հովիւներին, ամէն տեսակ
միջոցների զիմելով, բայց նորա բոլոր ջանքերը
խորտակում են նոցա հաստատակամութեան
առաջ, և ի վերջոյ մայրաքաղաքից հասած
հրամանը կրկին նոցա հաստատում է ս. Էջ-
միածնի հովանաւորութեան տակ. «Այլ թա-
փեցաք յընչից և աղքատացաք, կանչում է
խեղճ պատմիչը, զի գնաց աւելի քան զՍ զու-
րուշ սաղ դրամս»:³

Դաւիթ Բաղիշեցու պատմական երկը կա-
րելի է երկու որոշ մասի բաժանել, անցեալ
պատմութիւն և ժամանակակից պատմութիւն:
Ա. մասը կազմելիս օգտուել է Մ. Խորենա-
ցուց, Փաւստոսից, Զենոր Գլակից, Յովհան-
նէս կաթուղիկոսից, Թոմա Արծրունուց, Սա-
մուէլ Անեցուց, Յայմաւուրքից և, աւելի նոր
ժամանակի պատմութեան համար՝ Թովմա
Մեծոփեցուց. այնպէս որ հեղինակի «ծաղ-
կաքաղ արարեալ ի բազում պատմադրոց»
խօսքը շատ իրաւացի է: Պատմադիրս յակա-
նէ անուանէ յիշում է, Մովսէս Խորենացուն,
Փաւստոսին իրր աղբիւր:⁴ Իւր ժամանակի
պատմութիւնը 6—7 թ. տեղ է բռնում ձե-
ռագրիս մէջ, որն և ներկայանում է իրր
փոքրագիր հանրապատկիր (պանորամա) իւր
ժամանակի քաղաքական և կրօնական կեանքի:

Իրրե տարեգիր Դաւիթ Բաղիշեցին ու-
նի շատ գովելի յատկութիւններ: Ամենից ա-
ռաջ նա լակոնական ոճի սիրահար է. քիչ
նախադասութիւններ կամ բառեր կարելի
է գտնել, որ առանց պատմական կամ նկա-
րագրական կապը քանդելու ջնջել կարելի լի-
նի: Մեր պատմագրի լեզուական առանձնա-
յատկութիւններից մէկն էլ այն է, որ քա-
ղուածոյ մասերում խկական աղբիւրների ո-
ձերը օղակ օղակ ցոյց է տալիս, իսկ ինքնու-
րոյն մասում իւր ժամանակի զրարարն է
հնչում: Բ. բաղմնալիսի պատմական տեղե-
կութիւնները մեր «բանասէրը» գիտէ այնպէս
հաշտեցնել և զուգորդել, այնպէս «զլուռն և
զպիտանին անխալապէս» ընտրել, որ նոյնպէս
հազուադիւր է, մանաւանդ մեր միջնադարեան

1. 2եռ. Դ. Բ. 44-ր. 45-տ.

2. Նոյն. 19-ր.

1. 2եռ. ումսի. 2. 2եռ. 42 տ. 3. Նոյն. 42-ր.

տարեդիրներին համար: Նա անկեղծ պատմագիր է: ուր իւր տարբեր աղբիւրները չեն միաբանում՝ պարզ ասում է: Մեր պատմագրի համար մեծ նշանակութիւն ունի ստոյգ ժամանակագրութիւնը: «Այսուհետեւ կամիմ թվականաւն դամենայն րան. զի վարդա-նէ հետէ շիթեալ տեսանեմք զիշխանութիւն հայաստանեայց. . . այլ մեր թվականաւն զկարգն ցուցցուք. . .» նա ընդունում է ժամանակը իրրեւ հիմք պատմական իրողութեանց, շեշտելով քաղաքական դէպքերի խառնակութեան վրայ: Նշանաւոր անձանց և դէպքերի մասին եղած գրաւոր և բերանացի աւանդութիւնները նոյնպէս նիւթ են տալիս մեր պատմագրին: Մեր հեղինակի ամենամեծ սխալը, ոչ միայն տարբեր աղբիւրի, այլ նաեւ նոյն աղբիւրի եկեղեցական և քաղաքական պատմութիւնը անջատելն է, որը և պատճառ է դառնում նոյն դէպքերի երկիցս և երրեմն երկիցս յիշատակութեան:

Կրիկեցի.

ՕՐԹՈՒՌԷՍ ԵՎԵՂԵՑԻ.

Անցեալ փետրուար ամսին, մի շարաթուայ ընթացքում, Օրթոդոքս եկեղեցին կորցրեց իւր բարձր հոգեւորականութեան երկու առաջին կարգի ներկայացուցիչներին, փետր. 5-ին վախճանուեցաւ Բէլգրադի արքեպիսկոպոս և Սերբիոյ միտրոպոլիտ Միխայիլ, իսկ փետր. 13-ին Մոսկվայի միտրոպոլիտ Սերգի:

Սերբիական եկեղեցւոյ առաջին անկախ հովուապետ Միխայիլ միտրոպոլիտը ծնուած է 1826 թ. ին: Սկզբնական և միջնակարգ կրթութիւնը իւր հայրենիքում ստանալուց յետոյ նա 1847 թ. ին Կիեւ է եկել, ուր նախ կրկին հոգեւոր դպրոց է մտնել, ապա ձեմարան, և աւարտել է այստեղ 1853 թ. ին մագիստրոսի աստիճանով: Ռուսաստան գալուց յետոյ, ինչպէս ինքը սովորութիւն է ունեցել վերջերը յաճախ յիշել՝ նա արձանագրել է իւր յուշատետրի մէջ. «Մի մոռանար երբէք, և ոչ մի վայրկեան, թէ ինչի համար ևս հայրենիք թողել ու այստեղ եկել, Իմացած եղիր, որ նորա համար չես այստեղ, որպէս զի օգտուիս կեանքի զուարճութիւն-

ներից, այլ որպէս զի գիշեր ցերեկ աշխատես և ձեռք բերես որչափ կարելի է շատ գիտութիւն, որին այնչափ շատ պէտք ունի քո հայրենիքը. . . Աշխատիր, որ դու ևս մի ժամանակ որչափ իցէ օգտակար լինիս քո թանկագին և սիրելի ազգին:» Այդ սկզբունքին և հետեւել է նա իւր ամբողջ կեանքում: Ուսումնաւարտելուց յետոյ նոյն 1853 թ. ին նա կուսակրօն քահանայութեան աստիճան է ստացել Կիեւում և յաջորդ տարին հայրենիք վերադառնալով Բէլգրադի հոգեւոր դպրանոցի ուսուցչապետ կարգուել: Բայց երկար չէ մնացել այդ պաշտօնի մէջ, այլ մի քանի ամիս յետոյ վարդապետութեան աստիճան և եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելով՝ նշանակուել է Շարացի եպիսկոպոս, 1859 թ. ին նա միաձայն ընտրութեամբ Բէլգրադի միտրոպոլիտական աթոռն է բարձրացել, որի վերայ և մնացել է մինչև կեանքի վերջը, մի քանի տարիներ ընդմիջումով միայն (1881--1889): Միխայիլ միտրոպոլիտը Ռուսաստանի հաւատարիմ բարեկամն է եղել միշտ, մանաւանդ վերջին ուսուցչական պատերազմի ժամանակ կարեւոր դեր է խաղացել՝ քրիստոնէից ազատութեան համար արշաւող ուսուցիչներին նպաստներ հասցնելով և քաջալերելով: Ուստի և 1881 թ. ին, երբ Սերբիայում իշխանութեան ղեկը աւստրիական կուսակցութեան ձեռքն էր և միտրոպոլիտը ընդդիմացաւ նորա, հոգեւոր աստիճաններ ընդունողների վերայ գրած, ծանր հարկերի օրէնքը գործադրելուն՝ Միլան իշխանի հրովարտակով աթոռից զրկուեցաւ և 2 տարի առանձնական կեանք վարելուց յետոյ ստիպուած եղաւ մինչև իսկ հայրենիքից հեռանալ՝ ուխտ գնալ նախ ս. երկիր և ապա Ռուսաստանում բնակութիւն հաստատել: Մինչև որ 1889 թ. ին, երբ Միլան հրաժարուեցաւ գահից ինպաստ իւր Աղէքսանդր որդու, Միխայիլ, սերբ ժողովուրդի պահանջմամբ, հրաւիրուեցաւ կրկին միտրոպոլիտական աթոռի վերայ բազմելու: Նորա առաջին գործն եղաւ այդտեղ պատանի Աղէքսանդրին թագաւոր. օծել, ինչպէս 1882 թ. ին նորա հօրը, Սերբիոյ առաջին թագաւորին էր օծել: Նա ինքը, եռանդուն քանքեր գործ գնելով՝ 1879 թ. ին իւրաթող հանեց Տիեղ. պատրիարքի իշխանութիւնից և եղաւ Բէլգրադի առաջին անկախ միտրոպոլիտը: Անդադար աշխատելով իւր հօտի բարօրութեան համար՝ առանձին քանք է գործ դրել նա մանաւանդ հոգեւորականութեան կրթական աստիճանը բարձրացնելու. ուստի բազմաթիւ երիտասարդներ է ուղարկել Ռուսաստանի, երբեմն և Յուսաստանի, հոգեւոր ձեմարանները կամ համալսարանները՝ բարձր կրթութիւն ստանալու նպատակով և ամեն կերպ հոգ է տարել սեփական հոգեւոր կրթութարանների բարեկարգութեան մասին: Ի միջի այլոց նա թողել է 50-ի չափ զանազան կարգի և բովանդակութեան գրուածներ, բացի լրագրական յո-

1. Տէս. 26-ր. 19-ր. Գնելի մահուան մասին հորեմացու և Փաւստոսի ասածը, և այլ ձեղեր՝ անորոշ «ումանի» — բառով: